այսպէս սիրով և խաղաղութեամբ մեկնեցաւ Նուրի Էֆէնտի իւրովքն հանդերձ 'ի Ցոպպէ՝ նաւել անտի 'ի Կոստանդինուպոլիս. բայց զիլամն և զՀէօճմէթն զորս չարագրեաց 'ի միասին ընդ Դատաւորին համաձայն մտաց առաջին եւ երկրորդ հրովարտակաց, միայն զիլամն արար 2 օրինակ, զմին առաքեաց առ Կուսակալն Դամասկոսի, և զմիւսն ընդ սուրհանդակին 'ի Կոստանդինուպոլիս, և զՀէօճմէթն էառ ընդ իւր ցուցանել 'ի պատշաճաւոր տեղիս. իբրեւ խընդրեցին Հայք զպատճէնս նոցին, ոչ ետ, ասելով թէ չէ ձեզ հարկաւոր։ (Երանի թէ տուեալ էր)։

Իսկ Թէոդորոս Պատրիարք գրեաց առ Փոխանորդ Պօղոս վարդապետն, զի խորհրդով ազգայնոց Ջանասցին հընարս գտանել կանդնելոյ լուսարարին Հայոց փոփոխակի ընդ լուսարարին Ցունաց 'ի Գերեզմանն Քրիստոսի, զի յերուսաղէմ անկարելի եղեւ առնել զայն։

Բդեշխն Սիդոնի որ նստէր յԱկռաղոն, Մութէվէլլի դրան տաճարին Ս. Յարութեան պահանջէր գումարս 'ի Հայոց հաւասար Կուսակալին Դամասկոսի, եւ Փոխանորդ նորին որ նստէր 'ի Ցոպպէ՝ խնդրէր 25,000 դահեկան, և վասն սոցին կային վարանեալ Հայք, զի մի չարիս հասուցեն ուխտաւորաց և գոյից վանաց, որպէս արարին 'ի Զմիւռնիոյ և յԵգիպտոսէ եկեալ բեռանց, զի զկնի 50 աւուրց հազիւ կարացին աղատիլ 'ի ձեռաց նոցա։ Յոյնք արդէլ եալէին հրամանաւ Կուսակալին զնուազարանն Լատինաց 'ի Ս. Յարութիւն, և 'ի սոյն աւուրս 'ի միջնորդելոյ Դատաւորին, հրաւիրեցին նուագել զայն և սիրով միաբանել ընդ ինքեանս 'ի վնաս Հայոց, զի Լատինք մինչեւ ցայս վայր իբրեւ թէ սիրով վարէին ընդ Հայս, այլ յորժամ շահեցան Հայք զիրաւունս բաժանորդութեան 'ի Ս. Տեղիս, վշտացան յոյժ, զի նոքա ճոխացեալ պանծային յԵւրոպական Տէրութիւնս, և այնպէս ոչ կարացին վերստին թափել 'ի ձեռաց Ցունաց զեկեղեցին Բեթղեհէմի և Ս. Աստուածածնի, թէպէտեւ յաջողեցան առնուլ հրովարտակ 'ի Սուլթան Մահմուտէ, այլ ոչ կարացին առնել ինչ. նըմին իրի թէ առ նախանձու և թէ առ վշտի սրտից իւրեանց, մանաւանդ հակամէտ 'ի գրգռութիւնս Ցունաց, սկսան հակառակիլ վասն ժամանակի Պատարագին 'ի Բեթղեհէմ,